

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺՆԻ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Ստրատեգիական և շարունակական ուսուցման պլանավորման դեպարտամենտը /հետագայում՝ դեպարտամենտ/ համալսարանի ագրարային կրթության գիտության ռազմավարության, ինչպես նաև շարունակական ուսուցման ծրագրերի համակարգող ստորաբաժանում է:

2. Դեպարտամենտի գործունեության նպատակն է.

- համալրել համալսարանի մասնագիտական կողմնորոշում ունեցող շնորհաշատ գյուղական երիտասարդներով:

- ապահովել համալսարանի ուսումնական գործընթացի և գիտական աշխատանքների արդյունավետությունը, իրագործելով՝

- կրթության և գիտության բնագավառներում ռազմավարության օպտիմալ պլանավորում,
- դասախոսական անձնակազմի որակավորման բարձրացում,
- արտասահմանյան առաջատար ուսումնական հաստատությունների հետ համագործակցություն,
- ուսանողների և շրջանավարտների լրացուցիչ կրթական ծրագրերի ուսուցում:

3. Դեպարտամենտի կազմում ընդգրկվում են համալսարանի գործող հենակետային վարժարանը, կադրերի որակավորման բարձրացման, վերլուծական և լրացուցիչ կրթական ծրագրերի բաժինը:

4. Դեպարտամենտի գործունեությունից բխող իրավասություններն ու պարտականությունները սահմանվում է համալսարանի կանոնադրությամբ ՀՊԱՀ

վարժարանի, որակավորման բարձրացման, լրացուցիչ մասնագիտությունների բաժինների և սույն կանոնակարգով:

## ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5. Համալսարանի ամբիոնների հետ դեպարտամենտի փոխհարաբերությունները կառուցվում են "դեկանատ-ամբիոն" սկզբունքով:

6. Դեպարտամենտի ուսումնական, ուսումնամեթոդական և կազմակերպչական գործունեությունը իրականացվում է համալսարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ համակարգված՝ համալսարանում սահմանված ընդհանուր կարգի և պահանջների շրջանակներում:

7. Դեպարտամենտը.

7.1. Հաստատված ուսումնական պլաններին ու ծրագրերին համաձայն համակարգում է և վերահսկում աշխատանքային գործընթացը դեպարտամենտի համապատասխան ստորաբաժանումներում:

7.2. Նախապատրաստում և համալսարանի ղեկավարությանը առաջարկություններ է ներկայացնում համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների հետ կրթական և ուսումնամեթոդական ծրագրեր իրականացնելու ուղղությամբ պայմանագրային կապեր հաստատելու վերաբերյալ:

7.3. Անհրաժեշտ վերահսկողություն է իրականացնում վարժարանի մանկավարժական կազմի գործունեության ուղղությամբ, առաջարկությունների ներկայացնում նրանց կազմի ընտրության վերաբերյալ:

7.4. Կազմակերպում և իրականացնում է դեպարտամենտի ստորաբաժանումների համար անհրաժեշտ ուսումնական, ուսումնամեթոդական և գիտական գրականության ստեղծման և ձեռքբերման աշխատանքները:

7.5. Կազմում և համալսարանի ղեկավարության հաստատմանն է ներկայացնում իր ստորաբաժանումների գործունեության տարեկան ֆինանսական նախահաշվի նախագիծը:

7.6. Կազմակերպում և վերահսկում է վարժարանի ավարտական քննությունները:

8. Դեպարտամենտն ունի ուսումնամեթոդական խորհուրդ, որի կազմը /ոչ պակաս 11 անդամից/ 5 տարի ժամկետով հաստատվում է համալսարանի ռեկտորի կողմից:

9. Ուսումնամեթոդական խորհուրդը գումարում է նիստեր ամիսը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում արտահերթ նիստեր կարող են գումարվել համալսարանի ռեկտորի կամ կենտրոնի նախաձեռնությամբ, ինչպես նաև խորհրդի կազմի 2/3-ի պահանջով:

10. Ուսումնամեթոդական խորհուրդի որոշումներն ընդունվում են նրա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նիստը լիրագոր է, եթե մասնակիցների թիվը պակաս չէ նրա անդամների 2/3-ից:

11. Ուսումնամեթոդական խորհուրդը`

11.1. Քննարկում և հաստատում է դեպարտամենտի ստորաբաժանումների աշխատանքային պլանները և հաշվետվությունը:

11.2. Քննարկում և առաջարկություններ է ներկայացնում դեպարտամենտի ուսումնական, ուսումնամեթոդական, կազմակերպչական գործունեության, ինչպես նաև կադրերի որակավորման բարձրացման և վերաորակավորման բարձրացման և վերաորակավորման հարցերի առնչությամբ:

11.3. Քննարկում և հաստատման է ներկայացնում կենտրոնի առանձին ստորաբաժանումների ուսումնական պլանները և ծրագրերը:

11.4. Քննարկում և սահմանված կարգով հրատարակության է ներկայացնում ուսումնական և ուսումնամեթոդական դասագրքեր և ձեռնարկներ:

11.5. Առաջարկություններ է ներկայացնում համալսարանի խորհրդին, գիտական խորհրդին, կենտրոնի կառուցվածքային փոփոխությունների, ստորաբաժանումների ստեղծման, լուծարման, վերակառուցման և տարաբաշխման վերաբերյալ:

12. Դեպարտամենտը ղեկավարում է դեպարտամենտի պետը, պրոռեկտորի կարգավիճակով, որին աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է համալսարանի ռեկտորը:

13. Դեպարտամենտի պետը`

13.1. Ներկայացնում է դեպարտամենտը համալսարանում և այլ կազմակերպություններում:

13.2. Համակարգում է համալսարանի ուսումնական գործընթացի ստրատեգիական պլանավորումը, հենակետային վարժարանի և համալսարանի հանրակրթական ամբիոնների համատեղ համագործակցությունը մարզային ավագ դպրոցների հետ, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրերի ուսուցումը բոլոր մակարդակների վրա:

13.3. Ի պաշտոնե հանդիսանում է համալսարանի ռեկտորատի և գիտական խորհրդի անդամ:

13.4. Կատարում է աշխատանքի բաժանում կենտրոնի աշխատակիցների միջև և վերահսկում աշխատանքային կարգապահության պահպանմանը:

14. Վարժարանի տնօրենի, որակավորման բարձրացման լրացուցիչ կրթական ծրագրերի ուսուցման և վերլուծական բաժինների պետերի պարտականություններն ու իրավունքները արտացոլվում են համապատասխան ստորաբաժանումների կանոնակարգերում:

15. Դեպարտամենտում սահմանված է դեպարտամենտի պետի տեղակալի հաստիք: